

## ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՍԻԱ. ԿԱԶՄԸ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Հարավարևմտյան Ասիան գտնվում է Միջերկրական, Արաբական, Կարմիր, Սև և Կասպից ծովերի, Ադենի, Օմանի և Պարսից ծոցերի միջև: Տարածաշրջանն ընդգրկում է Փոքրասիական, Արաբական թերակղզիները, Հայկական լեռնաշխարհը, Իրանական բարձրավանդակը և Միջագետքի դաշտավայրը: Այդ սահմաններում այն զբաղեցնում է 6,6 մլն կմ<sup>2</sup> տարածք, որտեղ 20 պետություններում ապրում է 344 մլն մարդ:

Պատմաաշխարհագրական առումով Հարավարևմտյան Ասիայի կազմում են նաև Հարավային Կովկասի պետությունները: Այս տարածաշրջանում է գտնվում նաև հայերիս բնօրրանը՝ Հայաստանը:

Հարավարևմտյան Ասիայով են անցնում Եվրոպան և Աֆրիկան Ասիային կապող հաղորդակցության գլխավոր ուղիները: Դա նրա տնտեսաաշխարհագրական դիրքի կարևոր առանձնահատկությունն է, որը մեծ ազդեցություն է թողնում տարածաշրջանի երկրների սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման վրա:

Տարածաշրջանի բարենպաստ աշխարհագրական դիրքի, հարուստ բնական ռեսուրսների (հատկապես նավթի) պատճառով այստեղ առավել սուր ձևով բախվում են աշխարհի խոշորագույն պետությունների շահերը: Սուր հակասություններ կան նաև Հարավարևմտյան Ասիայի պետությունների միջև, ինչի պատճառով այս տարածաշրջանը դարձել է աշխարհի ամենաանկայուն տարածաշրջաններից մեկը: Այստեղ տարիներ շարունակ չեն դադարում պատերազմական գործողությունները և տարբեր բնույթի հակամարտությունները:

Տարածաշրջանի ավելի քան 20 պետություններն իրարից տարբերվում են պետական կարգով, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով, տնտեսական և քաղաքական կողմնորոշմամբ:

**Կառավարման ձևով** տարածաշրջանի երկրներից 7-ը միապետություններ են, որից 3-ը՝ բացարձակ (Սաուդյան Արաբիա, Քաթար, Օման): Տարածաշրջանի երկրների մեծ մասը հանրապետություններ են (տե՛ս դասագրքի աղյուսակը):

Տարածաշրջանում **սոցիալ-տնտեսական զարգացման** բարձր մակարդակով առանձնանում է Իսրայելը: Առաջատար են նաև տարածաշրջանի նավթ արտահանող երկրները:

Բազմազան են Հարավարևմտյան Ասիայի **զարգացման բնառեսուրսային նախադրյալները**: Այստեղ տարածված են ավազապատ ընդարձակ անապատները, կիսաանապատներն ու օազիսները, դրանց հարևանությամբ՝ ձյունապատ լեռնագագաթները, կանաչապատ գետահովիտներն ու ծովափերը:



Հարավարևմտյան Ասիա

Տարածաշրջանի հյուսիսային մասը գտնվում է Ալպ-Հիմալայան երիտասարդ լեռնային ծալքավորության գոտում ու այդ պատճառով էլ այդտեղ հիմնականում գերակշռում է լեռնային սակերևույթը: Այստեղ հաճախակի են երկրաշարժերը, կան նաև գործող հրաբուխներ՝ Նեմրոթ, Թոնդրակ (Հայկական լեռնաշխարհում), Դեմավենդ (Իրանական բարձրավանդակում): Լեռներում լավ արտահայտված է բնական պայմանների վերընթաց գոտիականությունը:

Տարածաշրջանի հարավային հատվածը (Արաբական թերակղզի, Միջագետք) ի հակադրություն հյուսիսայինի՝ հարթավայրային է:

Տարածաշրջանի զարգացման համար կարևոր նշանակություն ունեն **օգտակար հանածոները**, և հատկապես՝ նավթը և գազը: Հարավարևմտյան Ասիայի գլխավոր հարստությունը նավթն է: Այստեղ է կենտրոնացած նավթի համաշխարհային պաշարների 2/3-ը: Այստեղի նավթի որակը շատ բարձր է: Նավթը տարածաշրջանի երկրների մեծ մասի եկամտի գլխավոր աղբյուրն է: Նավթով հարուստ են Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Իրաքը, Իրանը, ԱՄԷ-ն: Նավթի համար մղվող պայքարը դարձել է Հարավարևմտյան Ասիայի լարվածության, երբեմն նաև հակամարտության, պատերազմների գլխավոր պատճառը:

Այստեղ է կենտրոնացած բնական գազի համաշխարհային պաշարների 1/4-ը: Գազի պաշարներով հարուստ են Իրանը, Սաուդյան Արաբիան, ԱՄԷ-ն:

Աձխի զգալի պաշարներ կան Թուրքիայում, Իրանում և Աֆղանստանում:

Բորատների և քրոմիտների համաշխարհային նշանակության պաշարներ կան Թուրքիայում, կալիումական աղերի՝ Իսրայելում, Հորդանանում և Իրանում: Երկաթի, պղնձի, բազմամետաղների հանքաքարի զգալի պաշարներով առանձնանում են Իրանը, Թուրքիան և Հայաստանը:

Լեռները, ավազոտ ու քարքարոտ անապատները զբաղեցնում են տարածաշրջանի տարածքի շուրջ 3/5-ը:

Անապատների յուրացումը կապված է մեծ դժվարությունների հետ: Առաջին հերթին անհրաժեշտ է ջուր, իսկ տարածաշրջանում շատ սուր է **ջրի հիմնական դիքը**: Ջուրն այստեղ ամենամեծ հարստությունն է համարվում: Դրա պակասը պետությունների միջև հաճախ քաղաքական լարվածության պատճառ է դառնում: Որտեղ ջուր կա՝ անապատը վերածվում է ծաղկուն այգեստանի:

Անապատներում ջրի հիմնական աղբյուրը ստորերկրյա ջրերն են, որոնց ելքի մոտ ձևավորվում են մշտադալար օազիսներ: Օազիսի գլխավոր բույսը փյունիկյան արմավենին է՝ օազիսի բնապատկերի անբաժանելի մասը, յուրահատուկ խորհրդանիշը:

Չորային կլիմայի պատճառով գետային ցանցը թույլ է զարգացած: Տնտեսական կարևոր նշանակություն ունեն Եփրատը, Տիգրիսը, Կուրը և Արաքսը, որոնք Հայկական լեռնաշխարհի ձյունապատ լեռների ծնունդ են: Միջին հոսանքում նրանք ունեն նաև էներգետիկական մեծ ներուժ:



Օազիս Օմանում

Հարավարևմտյան Ասիայում բերրի հողեր կան միայն գետահովիտներում և լեռնային շրջաններում: Կիսաանապատային գորշ հողերը հազարամյակներ շարունակ մշակվելով, դարձել են կուլտուր-ռոտգովի հողեր (օրինակ՝ Արաբասյան դաշտում), սակայն դրանց մի մասը սխալ օգտագործելու հետևանքով աղակալվել է, մի մասը՝ ճահճակալվել:

Մերձարևադարձային փարթամ բուսականությունը հիմնականում տարածված է ծովափնյա գոտում: Անտառները տարածված են նաև լեռներում:

Այստեղ դրանք ունեն հողապաշտպան, ջրակարգավորիչ և ռեկրեացիոն նշանակություն: Անտառները հարուստ են վայրի մրգերով և հատապտուղներով:

Տարածաշրջանի ամենաանտառապատ երկիրը Վրաստանն է:

Լեռնային շրջաններում անտառներից վեր տարածվում են ալպյան մարգագետինները: Դրանք ամառային հարմար արոտավայրեր են: Հայկական լեռնաշխարհի ալպյան մարգագետինների շրջանում կան նաև շատ աղբյուրներ և լճակներ, օրինակ՝ Բյուրակնը, որոնք կարևոր նախադրյալ են արոտային անասնապահության կազմակերպման համար:

Որպես մարդկային քաղաքակրթության հնագույն օրրան՝ տարածաշրջանը բնութագրվում է պատմամշակութային և ճարտարապետական բազմաթիվ հուշարձաններով: Դրանք, ինչպես նաև միջերկրածովյան հրաշագեղ լողափերը և հանքային ջրերը, հանգստի ու զբոսաշրջության վիթխարի ռեսուրս են:

Հարավարևմտյան Ասիայում ապրում է 344 մլն մարդ, որի 43 %-ը՝ 2 խոշոր երկրում՝ Իրանում և Թուրքիայում: Բնակչության ևս 40 %-ը բնակվում է հինգ երկրներում՝ Իրաքում, Աֆղանստանում, Սաուդյան Արաբիայում, Եմենում և Սիրիայում, իսկ 17 %-ը՝ տարածաշրջանի մնացյալ երկրներում:

Տարածաշրջանում տիրապետողը բնակչության վերարտադրության երկրորդ տիպն է:

Բնակչության բնական աճի վրա, ինչպես հայտնի է, ազդում են ազգային, կրոնական սովորույթները, սոցիալ-տնտեսական պայմանները:

Բնակչության կենսամակարդակի, գրագիտության ու ուրբանիզացման մակարդակի բարձրացման շնորհիվ բնակչության բնական աճի տեմպերը վերջին տասնամյակներում նկատելիորեն նվազել են, թեև, որպես մահ-մեղական բնակչությամբ բնակեցված տարածաշրջան, այդ ցուցանիշը դեռևս ավելի բարձր է, քան աշխարհի բնակչության աճի միջին տեմպը:

Հարավարևմտյան Ասիայում զգալի են բնակչության **գաղթերը**:

Ներգաղթածները մեծ թիվ են կազմում Պարսից ծոցի նավթարդյունահանող երկրներում: Դրա հետևանքով, օրինակ, Քաթարի և Քուվեյթի բնակչության միայն 40 %-ն է բնիկ, իսկ մեծ մասը եկվորներ են, գլխավորապես արաբական այլ երկրներից և Հնդկական օվկիանոսի ավազանի երկրներից:

Տարածաշրջան ներգաղթողների մշտական և զգալի հոսք ուղղված է դեպի Իսրայել: Դրանք աշխարհի տարբեր մասերից իրենց պատմական հայրենիք վերադարձող հրեաներն են: Արդյունքում՝ վերջին երկու տասնամյակում Իսրայելի բնակչությունն ավելացել է մի քանի անգամ և ներկայումս կազմում է 7,6 մլն մարդ:


Բնակչության **սեռային** կազմում գերակշռում են տղամարդիկ: Բացառություն են կազմում Հարավային Կովկասի երեք երկրները (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան): Ոչ միայն տարածաշրջանում, այլև աշխարհում տղամարդկանց ամենաբարձր գերակշռություն նկատվում է Քաթարում, Քուվեյթում և ԱՄԷ-ում (61-67 %):

Տարածաշրջանի գրեթե բոլոր երկրներում էլ բարձր է **կյանքի միջին տևողությունը**: Այն ամենից բարձրն է Իսրայելում (81 տարի), իսկ ամենացածրը՝ Աֆղանստանում (50 տարի): Հայաստանում այդ ցուցանիշը 73 տարի է:

Հարավարևմտյան Ասիայի բնակչությունը պատկանում է եվրոպեոիդ ռասայի հարավային ճյուղին: Այս տարածաշրջանն աչքի է ընկնում բնակչության **ազգային կազմի** խայտարեղեղությանը: Բնակչության ճնշող մեծամասնությունը (95 %) պատկանում է երեք խոշոր լեզվախմբերի՝ իրանական (պարսիկներ, քրդեր, աֆղաններ), սեմական (արաբներ, հրեաներ, ասորիներ) և թյուրքական (թուրքեր, ադրբեջանցիներ): Ամենից մեծ թիվ են կազմում արաբները: Նրանք բացարձակ մեծամասնություն են կազմում տարածաշրջանի 11 երկրներում:

Տարածաշրջանում ընդարձակ աշխարհագրություն ունեն քրդերը և հայերը: Զգալի թվով քրդեր ապրում են Թուրքիայում, Իրանում, Իրաքում: Հայաստանից բացի, զգալի թվով հայեր ապրում են Վրաստանում, Իրանում, Լիբանանում, Սիրիայում և Թուրքիայում:

Բավական բարդ է տարածաշրջանի բնակչության **կրոնական կազմը**: Եվ դա պատահական չէ: Այս տարածաշրջանում են ծնունդ առել համաշխարհային կրոններից քրիստոնեությունը և մահմեդականությունը, հրեաների ազգային կրոն հուդայականությունը: Այս տարածաշրջանում են այդ կրոնների ուխտավայրերը:



Մահմեդականների ուխտագնացությունը (հաջ) Մեքքա

Բացարձակ մեծամասնություն են կազմում մահմեդականության՝ իսլամի հետևորդները: Դրանք են արաբները, թուրքերը, իրանցիները, ադրբեջանցիները, աֆղանները: Հայերը, վրացիները, Կիպրոսի հույները դավանում են քրիստոնեություն: Քրիստոնեություն դավանում է նաև Սիրիայի և Լիբանանի արաբների մի մասը: Իսրայելում դավանում են հուդայականություն:

Կրոնի դերը, հատկապես՝ մահմեդական, շարունակում է բարձր մնալ շատ երկրների, տնտեսական և քաղաքական կյանքում: Այն ազդել է նաև երկրների

պետական կարգի վրա: Օրինակ, Սաուդյան Արաբիան աստվածապետական բացարձակ միապետություն է, իսկ Իրանը և Աֆղանստանը՝ իսլամական հանրապետություններ:

Հարավարևմտյան Ասիայում բնակչությունը շատ անհավասարաչափ է տեղաբաշխված: Բնակչության միջին խտությունը 45 մարդ/կմ<sup>2</sup> է, սակայն բնակչության 90 %-ն ապրում է տարածաշրջանի տարածքի 30 %-ի վրա: Առավել խտաբնակ են տարածաշրջանի միջերկրածովյան և կասպյան ափերը, Միջագետքում, միջլեռնային գոգավորություններում, Հորդանան գետի հովտում խտությունը հասնում է 300-400 մարդ/կմ<sup>2</sup>, մինչդեռ կիսաանապատային և անապատային ընդարձակ շրջաններ գրեթե անմարդաբնակ են:

Տարածաշրջանում դեռևս պահպանված է քոչվորական և կիսաքոչվորական ապրելակերպը: Սառույան Արաբիայում, Իրանում, Եմենում և Աֆղանստանում առնվազն 10 մլն մարդ նման կյանք է վարում:

Հարավարևմտյան Ասիայում **ուրբանիզացման** մակարդակն ավելի բարձր է, քան, օրինակ, Հարավային ու Հարավարևելյան Ասիայում և առավել ևս Աֆրիկայում: Վերջին տասնամյակներում քաղաքային բնակչության բաժնի սրընթաց աճը պայմանավորված է արդյունաբերության, հատկապես՝ նավթարդյունաբերության արագ զարգացմամբ: Ուրբանիզացման ամենից բարձր մակարդակ ունեն Իսրայելը և Պարսից ծոցի արաբական փոքր երկրները (80-95 %), իսկ ամենացածրը Աֆղանստանում է (23 %) և Եմենում (32 %): Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը ունեն ուրբանիզացման միջին մակարդակ:

Տարածաշրջանին բնորոշ են հնագույն՝ հազարամյա պատմություն ունեցող քաղաքները: Այդպիսիք են Երուսաղեմը, Երևանը, Բեյրութը, Դամասկոսը: Դրանց կողքին կան երիտասարդ, անցյալ դարի կեսերին ծնունդ առած քաղաքներ (Մանամա, Դոհա), որոնք նավթի արդյունաբերության զարգացման արդյունք են:

Տարածաշրջանի ամենից խոշոր քաղաքներից են Թեհրանը (12 մլն բնակիչ) և Ստամբուլը (11 մլն): Միլիոնանոց քաղաքների թիվն անցնում է երկու տասնյակից: Դրանցից մեկն էլ ՀՀ մայրաքաղաք Երևանն է:

Տարածաշրջանը մարդկային քաղաքակրթության հնագույն բնօրրաններից է: Այստեղի ժողովուրդները՝ հայերը, պարսիկները, հրեաները, արաբները, մեծ ավանդ ունեն համաշխարհային հոգևոր և նյութական մշակույթի գանձարանում: Պաղեստինը համարվում է հուդայականության և քրիստոնեության, իսկ Սառույան Արաբիան՝ իսլամի հայրենիքը: Այստեղ են առաջացել ու կործանվել հին աշխարհի պետություններից Բաբելոնը, Ասորեստանը, Ուրարտուն: Այստեղ է բարգավաճել հելլենական, իսկ միջին դարերում՝ արաբական մշակույթը:

## ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հարավարևմտյան Ասիայի երկրների մեծ մասի տնտեսական զարգացումը գլխավորապես հենվում է գյուղատնտեսության և սեփական հանքային ռեսուրսների օգտագործման վրա:

Հարավարևմտյան Ասիայի պետություններն այժմ տնտեսական զարգացման տարբեր փուլում են: Բավականին մեծ է Հարավարևմտյան Ասիայի երկրների զարգացման մակարդակների և տնտեսության կառուցվածքների տարբերությունը: Տարբեր են նաև տնտեսավարման ձևերը:

Պարսից ծոցի երկրներում տնտեսությունը մեծապես կախված է նավթի և գազի հանույթից և վաճառքից ստացվող եկամտից: Ստացվող միլիարդավոր «նավթադոլարներն» օգտագործվում են մշակող և սպասարկող ճյուղերի զարգացման համար: Դրա շնորհիվ այդ պետությունները դարձել են բնակչության բարձր կենսամակարդակով ծաղկուն երկրներ:

Զարգացման միանգամայն ուրույն ուղիներ ունեն Իսրայելը և Թուրքիան: Իսրայելում զարգանում են տնտեսության առաջատար բոլոր ճյուղերը՝ շնորհիվ արտասահմանյան երկրներից ստացվող մեծաքանակ գումարների և արտադրական բարձր մշակույթի: Իսրայելը դարձել է բարձր տեխնոլոգիաների կիրառման, գիտական մեծ ներդրումներով ժամանակակից ապրանքներ արտադրող զարգացած երկիր: Իսրայելը թևակոխել է զարգացման հետադյունաբերական փուլը:



Նավթավերամշակումը Իրաքում

Հարավարևմտյան Ասիայի բոլոր երկրներում էլ տնտեսության զարգացման գլխավոր ուղին **արդյունաբերության** առաջընթացի ապահովումն է: Այդ առումով առավել մեծ հաջողություններ ունեն Իսրայելը, Թուրքիան, նավթ արդյունահանող երկրները: Ծավալով և արժեքով առաջատար դերը պատկանում է արդյունահանող (հատկապես նավթի և գազի) արդյունաբերությանը: Տարածաշրջանը տալիս է նավթի համաշխարհային հանույթի 1/3-ը (ավելի քան 1,3 մլրդ տ): Նավթ արդյունահանվում է տարածա-

շրջանի գրեթե բոլոր երկրներում, բայց հիմնականում Սաուդյան Արաբիայում, Իրանում, Իրաքում, Քուվեյթում, ԱՄԷ-ում, Ադրբեջանում, որոնց բաժին է ընկնում տարածաշրջանի նավթի ողջ հանույթի 90 %-ը:

Նավթարդյունահանման հետ համեմատաձև, նավթավերամշակումը դեռևս թույլ է զարգացած:

Տարածաշրջանն աշխարհում առաջնակարգ տեղ է գրավում նաև բնական գազի հանույթով և արտահանմամբ:

Հարավարևմտյան Ասիայի էլեկտրաէներգիայի հիմնական մասը տալիս են ջերմաէլեկտրակայանները: Տարածաշրջանի դեռևս միակ գործող ատոմային էլեկտրակայանը Հայկականն է: ԱԷԿ կառուցվում է Իրանում: Թուրքիայում նախատեսվում է կառուցել մի քանի ԱԷԿ:

Մետաղաձուլությանը և մեքենաշինությանը առանձնանում են Թուրքիան, Իրանը և Իսրայելը: Արտադրում են ինքնաթիռներ, նավեր, ավտոմեքենաներ, ջերմաքարշեր:

Արդյունաբերության մեջ կարևոր տեղ ունի հանքային պարարտանյութերի (ազոտական, ֆոսֆորական) արտադրությունը:

Տարածաշրջանի ավանդական, ամենաընդարձակ աշխարհագրություն ունեցող ճյուղը թեթև արդյունաբերությունն է, որի ձեռնարկությունները տալիս են բամբակյա ու բրդյա գործվածքներ, գորգեր և կաշվե արտադրանք:

Հարավարևմտյան Ասիայում լայնորեն տարածված են տնայնագործությունը և ազգային արհեստները:

Տարածաշրջանի **գյուղատնտեսությունը** բազմաճյուղ է: Նրա զարգացմանը նպաստել են կլիմայական պայմանները, արոտավայրերը և սպառման ընդարձակ շուկան: Գյուղատնտեսության գլխավոր գրավականը ռոտոզվի հողերն են:

Տարածաշրջանում մեծ են գյուղատնտեսության վարման մակարդակների տարբերությունները: Այստեղ գոյություն ունեն և ապրանքային խոշոր սնունտություններ, որտեղ տիրապետողը զարգացման ինտենսիվ ուղղությունն է (միջերկրածովյան և կասպյան ափերին), և՛ դեռևս ավանդական (էքստենսիվ) վարման մեթոդները (Արաբական թերակղզի, Իրանի ներքին շրջաններ):

Տարածաշրջանի գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է: Հացահատիկային հիմնական մշակաբույսերն են՝ ցորենը, եգիպտացորենը, բրինձը, գարին, որոնց տարածման գլխավոր շրջաններն են Թուրքիան, Իրանը, Սիրիան, Իրաքը:

Տարածված ճյուղ է պտղաբուծությունը: Մշակում են նուռ, նուշ, թուզ, ձիթապտուղ, ծիրան, ցիտրուսներ: Լայն տարածում ունի խաղողագործությունը: Տարածաշրջանն աշխարհում առաջինն է փյունիկյան արմավի արտադրությամբ (Իրաք, Սաուդյան Արաբիա, Իրան):

Տարածաշրջանի ապրանքային կարևոր մշակաբույս է սուրճը (Եմեն), հատկապես նրա «մոկկո» և «արաբիկա» տեսակները: Թուրքիան հռչակված է ծխախոտի մշակությամբ: Բամբակենու մշակության գլխավոր երկրներն են Թուրքիան, Սիրիան, Իսրայելը, Իրաքը, Իրանը:

**Անասնապահությունն** իր արտադրանքի ծավալով և նշանակությամբ զգալիորեն զիջում է բուսաբուծությանը: Գերակշռում է արոտային անասնապահությունը, որի համար հիմք են հանդիսանում անապատները, լեռնային արոտավայրերը: Առավել լայն տարածում ունի ոչխարաբուծությունը: Թուրքիան աշխարհում անգորական այծերի բուծման գլխավոր երկիրն է: Անապատային շրջաններում (արաբական երկրներ, Իրան, Աֆղանստան) զարգացած է ուղտաբուծությունը: Տարածաշրջանը ուղտաբուծության կարևոր շրջաններից է: Ուղտը քոչվոր արաբի՝ բեդուինի կյանքում անփոխարինելի դեր է կատարում: Պատկերավոր ասած՝ բեդուինը միայն ուղտի ձայնը չի օգտագործում:

Հարավարևմտյան Ասիան աշխարհում առանձնանում է **խողովակաշարային տրանսպորտի** զարգացման բարձր մակարդակով:



Տարածաշրջանում ստեղծվել է միջազգային և տեղական նշանակության նավթամուղների և գազամուղների խիտ ցանց:

Տարածաշրջանի կարևոր և արագ զարգացող ճյուղը ավտոմոբիլային տրանսպորտն է: Ավտոմոբիլային բարձրակարգ ճանապարհները շատ են հատկապես նավթահանքային շրջաններում: Այնուամենայնիվ, երկրների գլխավոր խնդիրը ցամաքային ճանապարհների բարեկարգումը և նոր ճանապարհների կառուցումն է:

Տարածաշրջանի **երկաթուղային** կապը Եվրոպայի հետ իրականացվում է Բոսֆորի վրայով: Տարածաշրջանի մի շարք երկրներում բացակայում են երկաթուղիները (ԱՄԷ, Եմեն, Օման, Կիպրոս, Քուվեյթ և այլն):

Կարևոր նշանակություն ունի **ծովային** տրանսպորտը: Պարսից ծոցի նավահանգիստներից են սկսվում նավթի համաշխարհային գլխավոր բեռնահոսանքները դեպի Եվրոպա, ԱՄՆ և Ճապոնիա: Կիպրոսը աշխարհի խոշորագույն նավատորմ ունեցող երկրներից մեկն է:

Շատ մեծ է Հորմուզ, Բաբելմանդեբ, Բոսֆոր նեղուցների և Սուեզի ցրանցքի տնտեսական նշանակությունը:

Տարածաշրջանում կառուցված են մի շարք նավթամուղներ, որոնցով Պարսից ծոցի հարակից նավթահանքերից արդյունահանած նավթը փոխադրվում է Միջերկրական ծովի նավահանգիստներ:

Անապատային տարածքներում տրանսպորտի անփոխարինելի միջոցը ուղտն է:

Տարածաշրջանով են անցնում միջազգային օդային բազմաթիվ ուղիներ:

Հարավարևմտյան Ասիայում առկա են արտաքին **տնտեսական կապերի** բոլոր ձևերը:

Տարածաշրջանի երկրները զարգացած երկրներից ներմուծում են մեքենասարքավորումներ և ժամանակակից տեխնոլոգիաներ: Արտահանում են նավթ, բնական գազ և այլ օգտակար հանածոներ, բուսաբուծության և անասնապահական արտադրանք, գորգեր, տնայնագործական իրեր:

Զբոսաշրջությունը մեծ զարգացում է ստացել Կիպրոսում, Թուրքիայում, Լիբանանում, ԱՄԷ-ում, Սաուդյան Արաբիայում: Զբոսաշրջության զարգացման մեծ ներուժ ունի Հայաստանը: